

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում
մասնակցելու թույլտվության տրամադրումը»
կանոնակարգ 19-ը հաստատելու մասին***

Հիմք ընդունելով «վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 8-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդված «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» կանոնակարգ 19-ը՝ համաձայն հավելված 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
16 հունիսի 2005 թ., N 296-Ն*

** Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2005 թ. հունիսի 8-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 8.07.05 թ. (ՀՀԳՏ N18 (195), 15.07.05):

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2005 թվականի հունիսի 8-ի թիվ 296-Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 19



ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՍԱԴՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում (այսուհետ՝ համակարգեր) մասնակցության թույլտվության տրամադրման, համակարգի գործունեության կանոններում փոփոխությունների վերաբերյալ կենտրոնական բանկին տեղեկացման ընթացակարգերը և համակարգը բնութագրող չափանիշները:

2. Սույն կանոնակարգը տարածվում է ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի և վճարահաշվարկային կազմակերպությունների վրա:

ԳԼՈՒԽ 2. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

3. Կենտրոնական բանկի կողմից սահմանվում են արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը բնութագրող հետևյալ չափանիշները՝

ա) համակարգի մասնակիցների քանակը երեքից քիչ է:

բ) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի անվանացանկը, որը ներառում է հետևյալ համակարգերը՝ ՎԻՉԱ և ՄԱՍՏԵՐՔԱՐԴ քարտային վճարումների համակարգերը:

4. Սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված չափանիշներից առնվազն մեկը բավարարելու դեպքում համակարգում մասնակցության համար թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է սույն կանոնակարգի 4-րդ գլխի համաձայն: Եթե համակարգը չի բավարարում սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված չափանիշները, ապա համակարգում մասնակցության համար թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է սույն կանոնակարգի 3-րդ գլխի համաձայն:

**ՉԼՈՒԽ 3. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՉՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՂ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

5. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու համար համակարգի մասնակիցը (այսուհետ՝ դիմորդ) Կենտրոնական բանկ է ներկայացնում «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերը:

Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցելու թույլտվություն ստանալու միջնորդագրի ձևը սահմանվում է համաձայն հավելված 1-ի:

Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության տնտեսական հիմնավորման օրինակելի ձևը սահմանվում է համաձայն հավելված 3-ի:

Համակարգի գործունեության ընդհանուր նկարագրությունը և դիմորդի պարտավորությունները, իրավասությունները և հնարավոր ռիսկերի գնահատումը պարունակող տեղեկանքը, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային կրիչների վրա՝ այդ մասին նշելով սույն կետով սահմանված միջնորդագրում:

6. Եթե սույն կանոնակարգի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերը թերի են ներկայացված (ամբողջական չեն կամ առկա

են որոշակի թերություններ), Կենտրոնական բանկը, ոչ ուշ, քան փաստաթղթերի ներկայացման 30-րդ օրը, այդ մասին գրավոր տեղեկացնում է դիմորդին, որը պարտավոր է տեղեկացմանը հաջորդող տասնօրյա ժամկետում Կենտրոնական բանկ ներկայացնել շտկված և (կամ) բացակայող փաստաթղթերը: Սույն կետով սահմանված ժամկետի ընթացքում անհրաժեշտ շտկումների (փաստաթղթերի, նյութերի կամ պարզաբանումների) չներկայացման դեպքում արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու միջնորդագիրը մերժվում է՝ փաստաթղթերը թերի լինելու հիմքով:

7. Կենտրոնական բանկը բավարարում է արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու միջնորդագիրը, եթե բացակայում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 8-ի 3-րդ մասով սահմանված հիմքերը:

8. Կենտրոնական բանկը մերժում է արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու միջնորդագիրը, եթե առկա են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 8-ի 3-րդ մասով սահմանված հիմքերից մեկը:

9. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու միջնորդագիրը մերժելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին գրավոր տեղեկացնում է դիմորդին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը: Միջնորդագիրը մերժելու դեպքում դիմորդն իրավունք ունի արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստանալու նոր միջնորդագիր ներկայացնել Կենտրոնական բանկ ընդհանուր կարգով:

10. Կենտրոնական բանկը կարող է ուժը կորցրած ճանաչել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվությունը՝ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 8-ի 4-րդ մասով սահմանված դեպքերում: Թույլտվությունը ուժը կորցրած ճանաչելու դեպքում իրականացվում է համապատասխան գրառում սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված թույլտվությունների գրանցամատյանում:

**ԳԼՈՒԽ 4. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒԽ ՍԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ
ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

11. Սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված չափանիշ-ներին համապատասխանող համակարգի մասնակիցը Կենտրոնական բանկ է ներկայացնում՝

- ա) սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված չափանիշ-ների մեծության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն հավելված 2-ի,
- բ) «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 8-ի 1-ին մասի «ա» և «դ» կետերով սահմանված փաստաթղթերը:

12. Կենտրոնական բանկը տալիս է արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվությունը, եթե՝

- ա) համակարգը բավարարում է սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված չափանիշները,
- բ) «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի 5-րդ մասով սահմանված փաստաթղթերը թերի չեն:

13. Միջնորդագրի մերժման դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին գրավոր տեղեկացնում է դիմորդին՝ նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը: Միջնորդագիրը մերժելու դեպքում դիմորդն իրավունք ունի թույլտվություն ստանալու նոր միջնորդագիր ներկայացնել ընդհանուր կարգով:

14. Սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված չափանիշ-ների մեծության փոփոխման կամ համակարգի գործունեության փոփոխման հետևանքով սահմանված չափանիշների մեծությանը չհամապատասխանելու դեպքում արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցը պարտավոր է համապատասխան փոփոխությունն ուժի մեջ մտնելու պահից մեկշաբաթյա ժամկետում դիմել Կենտրոնական բանկ՝ սույն կանոնակարգի 3-րդ գլխով սահմանված կարգով նոր թույլտվություն ստանալու համար:

15. Սույն գլխով սահմանված ընթացակարգով թույլտվությունը ուժը կորցրած ճանաչելու հիմքերը նույնն են, ինչ սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված դրույթները:

**ՉԼՈՒԽ 5. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԿՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՍՆԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ
ԹՈՒՅԼՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ, ԿԱՐՄԱՆ
ԿԱՐԳԸ, ԴՐԱՆՑՈՒՄ ՆԵՐԱՌԿՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,
ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿԸ**

16. Կենտրոնական բանկի՝ լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանման կողմից վարվում է արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվությունների գրանցամատյանը, որում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝

- ա) համակարգի անվանումը,
- բ) Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշման համարը և ամսաթիվը՝ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տալու վերաբերյալ,
- գ) մասնակցի (դիմորդի) անվանումը և իրավաբանական հասցեն,
- դ) տեղեկություններ՝ գրանցամատյանում փոփոխությունների իրականացման վերաբերյալ:

Թույլտվությունների գրանցամատյանը բաց է համընդհանուր ծանոթացման համար:

Թույլտվությունների գրանցամատյանից իրենց վերաբերյալ տեղեկատվությունը համակարգի մասնակիցներին տրամադրվում է անվճար՝ 3 օրվա ընթացքում:

Թույլտվությունների գրանցամատյանից այլ անձանց վերաբերյալ տեղեկությունները ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվում են պետական տուրքի վճարման դեպքում՝ 3 օրվա ընթացքում:

17. Կենտրոնական բանկի՝ լիցենզավորման գործընթացով զբաղվող համապատասխան ստորաբաժանումը կազմում և վարում է Կենտրոնական բանկի կողմից արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն ստացած յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ անհատական գործ, որին պետք է կարվեն նաև համակարգի գործունեության ընթացքում իրականացվող բոլոր փոփոխությունները:

**ԳԼՈՒԽ 6. ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ**

18. Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցը պարտավոր է օրենքով սահմանված ժամկետում Կենտրոնական բանկին տեղեկացնել «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի 1-ին մասի «գ» և «դ» կետերով սահմանված փաստաթղթերում կատարվող փոփոխությունների վերաբերյալ, բացառությամբ արտասահմանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության աշխարհագրության և մասնակիցների կազմում փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունների, որոնց մասին մասնակիցը տեղեկացնում է՝ ինքը պատշաճ ձևով տեղեկացված լինելու դեպքում:

19. Սույն կանոնակարգի 18-րդ կետով սահմանված փոփոխությունները կցվում են տվյալ մասնակցի՝ սույն կանոնակարգի 17-րդ կետով սահմանված անհատական գործին:

20. Կենտրոնական բանկը, սույն կանոնակարգի 18-րդ կետով սահմանված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանալուց հետո, մեկամսյա ժամկետում կարող է ուժը կորցրած ճանաչել արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվությունը, եթե կատարված փոփոխություններն առաջացնում են «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի 3-րդ մասի «գ» կետում նշված հիմքերը:

21. Սույն կանոնակարգի 20-րդ կետով սահմանված հիմքերով թույլտվությունը ուժը կորցրած ճանաչելու դեպքում Կենտրոնական բանկն այդ մասին գրավոր տեղեկացնում է մասնակցին՝ նշելով թույլտվությունը ուժը կորցրած ճանաչելու հիմքերը:

Հավելված 1

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԻՋՆՈՐՂԱԳՐԻ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
_____ -ին

Դիմորդի անվանումը _____

Դիմորդի գտնվելու վայրը _____

Համակարգի անվանումը _____

Համակարգի օպերատորը _____

*(պրոցեսինգ և (կամ) քլիրինգ, վերջնահաշվարկ
իրականացնող ֆինանսական հաստատությունը)*

Խնդրում եմ Ձեր թույլտվությունը _____

(համակարգի անվանումը)

համակարգին անդամակցելու համար:

Կից ներկայացնում եմ՝

Մասնակցի գործադիր մարմնի տնօրեն՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱԼՔ

Սույն տեղեկանքով հավաստիացնում են, որ _____
(համակարգի անվանումը)

համակարգը, որին մենք անդամակցում ենք, համապատասխանում է «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 19-ով սահմանված արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը բնութագրող հետևյալ չափանիշին կամ չափանիշներին՝

1. համակարգի մասնակիցների քանակը _____
2. համակարգը ներառված է Կենտրոնական բանկի կողմից սահմանված արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերի անվանացանկի մեջ _____

(համակարգի անվանումը)

Հավաստիացնում են նաև, որ «Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցելու թույլտվության տրամադրումը» ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգ 19-ով սահմանված արտասահմանյան վճարահաշվարկային համակարգը բնութագրող չափանիշներին չհամապատասխանելու դեպքում օրենքով սահմանված ժամկետում և կարգով այդ մասին պետք է տեղեկացնեն Կենտրոնական բանկին:

Մասնակցի գործադիր մարմնի տնօրեն՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԿՃԱՐԱԽԱՉՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՆԱԿԱՐԳՈՒՄ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության տնտեսական հիմնավորումը կոնկրետ հաշվարկներով, վերլուծություններով և ելակետային տվյալներով հիմնավորված, հիմնավորման ներկայացմանը հաջորդող երեք լրիվ ֆինանսական տարիների համար կազմված, վճարահաշվարկային համակարգում մասնակցության հետ կապված գործունեությունը նկարագրող և հիմնավորող փաստաթուղթ է: Մասնակցության տնտեսական հիմնավորումը բաղկացած է հետևյալ բաժիններից

I. Ընդհանուր դրույթներ

- 1) համակարգի անվանումը,
- 2) համակարգում մասնակցելու նպատակները (հեռանկարները):

II. Գործունեության հիմնական ուղղությունները

- 1) մասնակցի կողմից իրականացվելիք գործառնությունների տեսակները և դրանց համառոտ բնութագիրը,
- 2) ապագայում նախատեսվող ծառայությունները,

III. Մարքեթինգային վերլուծություն

- 1) ոլորտի վերլուծություն (ոլորտի մասնակիցները, հիմնական մրցակիցները),
- 2) ֆինանսական այն շուկաների նկարագիրը, որոնցում այն պատրաստվում է իրականացնել իր գործունեությունը (հեռանկարային զարգացման միտումները, ռազմավարության հիմնական սկզբունքները),
- 3) հաճախորդների խմբի բնութագիրը և կանխատեսվող թիվը:

IV. Ռազմավարությունը

- 1) դիրքավորում,
- 2) խթանման ռազմավարություն,
- 3) գնային ռազմավարություն,
- 4) ներդրման ծրագիր:

V. Եկամուտների և ծախսերի մոտավոր հաշվարկը

- 1) ֆինանսավորման աղբյուրները,
- 2) առաջիկա 3 տարիների համար նախատեսված եկամուտների և ծախսերի հաշվարկը: